



ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (HACLA) COVID-19 HUD-Ի ՀՐԱԺԱՐՈՒՄՆԵՐ

ԱՄՆ-ի Բնակարանային և Քաղաքաշինության Նախարարությունը (HUD), համաձայն Կորոնավիրուսի Օգնության, Մեղմացման և Տնտեսական Անվտանգության (CARES) Ակտի, թույլ է տվել բնակարանային կազմակերպություններին (PHA) որոշակի հրաժարվել և սահմանել այլընտրանքային պահանջներ, որոնք թույլ են տալիս պետական վարչական ճկունություն՝ ի պատասխան Կովեդ-19 ազգային հրատապ իրավիճակին: Համաձայն PIH Ծանուցման 2020-05-ի, HACLA-ն ընդունել է հետևյալ հրաժարումները, որոնք կարող են ազդել ձեզ:

Ստուգումներ՝ Նախնական և Բողոքի

Տեսակ՝ Թույլ է տալիս HACLA-ին ընդունել տանտիրոջ ինքնավկայագրությունը, որ բնակարանը համապատասխանում է բնակարանային որակի չափանիշներին:

Ավարտի Ամսաթիվ՝ Հուլիսի 31-ին 2020թ:

Ազդեցություն՝ HACLA-ն ստուգելու է բնակարանը Հոկտեմբերի 31-ին 2020թ եթե Կովեդ-19-ի արտակարգ դրության հայտարարագիրը այլևս ուժի մեջ չլինի:

Ստուգումներ՝ Երկամյա

Տեսակ՝ Թույլ է տալիս HACLA-ին հետաձգել բոլոր երկամյա ստուգումները:

Ավարտի Ամսաթիվ՝ Հոկտեմբերի 31-ին 2020թ:

Ազդեցություն՝ հետաձգված բոլոր ստուգումները պետք է ավարտվեն մինչև Հոկտեմբերի 31-ը 2020թ:

Եկամտի Ստուգում

Տեսակ՝ Թույլ է տալիս HACLA-ին օգտագործել վարձակալի ինքնավկայագրությունը տարեկան և այնպես էլ միջանկյալ վերանայման համար:

Ավարտի Ամսաթիվ՝ Հուլիսի 31-ին 2020թ:

Ազդեցություն՝ Եթե չկարողանաք տրամադրել երրորդ անձանց գրավոր ձեր եկամուտների ապացույց, մենք ձեզնից գրավոր վկայագրություն կընդունենք:



ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (HACLA)

Վաուչերի ժամկետ`

Տեսակ` Թույլ է տալիս HACLA-ին տրամադրել վաուչերային երկարաձգումներ Հատված 8 վարչական պլանից դուրս:

Ավարտի Ամսաթիվ` Հուլիսի 31-ին 2020թ:

Ազդեցություն` վաուչերի ժամկետը դիմող / մասնակից ընտանիքների համար լրանում է ընթանուր 270 օրացուցային օրվա ավարտին: HACLA-ն կարող է տրամադրել մեկ 90-օրյա ժամկետի երկարացում `270 օրացուցային օրվա ավարտից հետո:

Վաուչերի Թողարկման Հանդիպում`

Տեսակ` HACLA-ին թույլ է տալիս վաուչերի թողարկման նիստերը անցկացնի վեբ-հեռարձակմամբ, տեսազանգով կամ վարձակալի հաստատման փաթեթների ընդլայնված խնդրանքով (RFTA):

Ավարտի Ամսաթիվ` Հուլիսի 31-ին 2020թ:

Ազդեցություն` Ընտանիքները պետք է տեսանյութ տեսնեն `վաուչերը ստանալու համար:

Եկամտի Բացառումը`

Տեսակ` Դիմող / մասնակից ընտանիքների կողմից ստացած CARES-ի վճարումները բացառվում են ձեր եկամտի հաշվարկներից:

Ավարտի Ամսաթիվ` Ոչ կիրառելի:

Ազդեցություն` CARES-ի վճարները չեն համարվի որպես եկամուտ ձեր բնակարանային օժանդակության կամ տարեկան վերանայման հաշվարկներում:

Բնակարանից Բացակայություն`

Տեսակ` Մասնակից ընտանիքը կարող է բացակայել բնակարանից ավելի քան 180 օր անընդմեջ `մեղմացուցիչ հանգամանքների պատճառով (հոսպիտալացում, ծերանոցներում երկարատև մնալ, ընտանիքի անդամներին հոգ տանելու համար):

Ավարտի Ամսաթիվ` Դեկտեմբերի 31-ին, 2020թ:

Ազդեցություն` Բնակարանային Կազմակերպությունը չի վճարի բնակարանային օգնության վճարները (HAP) Դեկտեմբերի 31-ից հյտո, և HAP-ի պայմանագիրը կդադարեցվի այդ ամսաթվով, եթե ընտանիքը դեռ բացակայում է բնակարանից:



ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (HACLA)

Սառեցնել Վարձավճարը`

*ՍԱ HUD-Ի ՀՐԱԺԱՐՎՈՒՄ ՇԷ

Տեսակ` Քաղաքային օրենքը ժամանակավոր արգելում է վարձավճարների կայունացման կարգադրությանը (RSO) ենթակա բնակարանների վարձի բոլոր ավելացումները:

Ավարտի Ամսաթիվ` Քաղաքային օրենքը ուժի մեջ կմնա մեկ տարի COVID-19 արտակարգ իրավիճակն ավարտից հետո: Այս օրվանից հետո տանտերը կարող է վարձը բարձրացման պահանջ ներկայացնի: Վարձի բարձրացումը հետադարձ ուժ չունի և չի կուտակվում մեկ տարվա ընթացքում:

Ազդեցություն` Բնակարանային Կազմակերպությունը չի ընդունի վարձի ավելացումը RSO-ին ենթակա օժանդակ բնակարանների համար, եթե HCIDLA-ն չընդունի բացառություն:

Վտարում`

Տեսակ` Մասնակից ընտանիքը չի կարող վտարվել իրենց վարձի մասնաբաժինը չվճարելու համար:

Ավարտի Ամսաթիվ` Հուլիսի 24-ին 2020թ:

Ազդեցություն` Վարձակալի վարձի բաց թողած մասնաբաժինը վտարման արգելքի ընթացկում կուտակվելու է և պետք է մինչև հուլիսի 24-ը 2020թ վճարվի:

Ավելացնել Ընտանիքի Անդամներ`

Տեսակ` Թույլ է տալիս մասնակից ընտանիքին ավելացնել ընտանիքի անդամներ համաձայն COVID-19 արտակարգ իրավիճակին, չնայած գերազանցվում է այն պահանջը, որ յուրաքանչյուր բնակարան պետք է ունենա առնվազն մեկ ննջասենյակ կամ բնակելի / տարածք 2 անձից ավելի անդամի համար:

Ավարտի Ամսաթիվ` Այս կանոնը ուժի մեջ կլինի ներկա վարձակալության ժամկետի տևողությունից կամ մինչև Ապրիլի 9-ը 2021թ., ավելի երկար ժամանակի տարբերակը:

Ազդեցություն` Մասնակից ընտանիքը դեռ պարտավոր է խնդրել HACLA-ին և տանտիրոջը նախնական հաստատում `նախքան ընտանիքի անդամներ ավելացնելը:

Եթե վերը նշված փոփոխությունների հետ կապված որևէ հարց ունեք, դիմեք ձեր խորհրդատուին: Շնորհակալություն.